

Երեք ամիս՝ անդէն կացեալ,
և զսրբութիւնսն՝ ուխտ արարեալ.
զպատմութեանն՝ Քրիստոսի,
բազում տնգամ՝ աչօք տեսեալ:

Զձեռք աղաչեմ՝ յոյժ աղերսեալ,
որք հանգիպէք՝ զողոս ընթերցեալ.
Թէ գրտանէք՝ ի սմա սրբալ,
ներումն առնել՝ ոչ մեղադրեալ:



ՊԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԶՐՕԲՀՆԵԱՅ ԵՐԳԵՐԻՑ:

Վարանդա դաւառի Անտարանոց զիտի շրջակայքում:

Ալէլուեա Ալէլուեա.

Էսա եկէնք էս կըտօրս, ալէլուեա.

Սառալ ա տըրէխներս, ալ.

Էս կըտօրս չուրբ սրճէ չուրբ ոննէ, ալ.

Ծօծը գըլխէն ծալած զումաշ, ալ.

Ծօխը քընեց հէն թիւրիւշիւմ, ալ.

Թուրունն ա կեարմուր եխճէ, ալ.

Պողերն ա վառված աստղեր, ալ.

Պուտանն ա թառ երզնէկ, ալ.

Հացերն ա կեօրծած խաչեր, ալ.

Ծըհանն ա ոսկէ շիշակ, ալ.

Տէփն ա աւիտարան, ալ.

Ծըկոտէչն ա քաշկու մաններ, ալ.

Հացթօխն ա փօնջ մընէշակ.

Քրիստուծ քինեց Դրախտինը, ալ.

Գւազանը խուրըցրուց, ալ.

Կըթնախիւրը փխըցրուց, ալ.

Աջի կըռան աւիտարան, ալ.

Չախի կռան սաղմոսարան, ալ.

Լալան եկը լըղըցրուց, ալ.

Ալէլուիան ուրխուցըրուց, ալ.

Չեր տոնը շէն, ձեր տոնը շէն, ալ.

Չեր խուխոցը անումը հի՛նչ ա.

Հըփաղին նման շրտանան.

Գետէն նման ըրկընան,

Ծառէն նման ձեղնը տան.

Քաշ կռակլաւ ձեր գիւշմանէն աչքը տիւս օնէ.

Գիւլը ոննան փռնէ քաշ անէ.

Ա՛ տնատար փայլ բերէք ալէլուան տանէ:

Վարանդա դաւառի Ծարտար զիտի շրջակայքում:

Ալէլուեա Ալէլուեա.

Էսա եկէնք էս կըտօրս, ալ.

Ձիր ու՛շամէնչ էս ճօտերս, ալ.

Էս տօնս ա չուրբ սրճէ չուրբ սիւնի, ալ.

Չուրբքանուց ոննը սալին, ալ.

Հաղար հաղար, բարով հաղար, ալ.

Չարը սրտէն չըրըկամէն, ալ.

Որդին ապրէ բարիկամէն, ալ.

Թուրունն ա կեարմուր եխճէ, ալ.

Հացերն ա կեօրծած խաչեր, ալ.

Պուտանն ա թառ ըզնէկ, ալ.

Հացթօխն ա փօնջ մընէշակ, ալ.

Ծըհաննա ոսկէ շըշակ, ալ.

Ծօխը քինեց հում թիւրիւշիւմ, ալ.

Ծօծը երբան ծալած զումաշ, ալ.

Պաճերն ա վառված աստղեր, ալ.

Հընեակ քեզ ա՛ Պէլի վանէս, ալ.

Որ դու Քրիստուծ օրօրեցեր, ալ.

Քրիստուծ քինից Դրախտինը, ալ.

Գւազանը խուրըցրուց, ալ.

Կըթնախիւրը փխըցրուց, ալ.

Լալաւեկը լըղըցրուց, ալ.

Լալալ լալալ ճիւժկը հալալ, ալ.

Չէխէ ձեռքէն սաղմոսարան, ալ.

Աջի ձեռքէն աւիտարան, ալ.

Տոնը շէն, տոնը շէն.

Չեր խուխէցըն անումը հի՛նչ ա.

Չեր խօխէքը հըւտգու նման շրտանան.

Գետու նման ըրկընանան.

Չեր գիւշմանը քըրըքար ընկնէ.

Աչքը գըռակլաւ հանէ.

Ոննան փռնէ գիւլ տանէ:

Վարանդում՝ սոյն երգերը երգելիս այսպէս են անում. երեք հօգի վեր են բարձրանում կտուրը հերթին կանգնում, երկու հօգի պըկօ են ածում, իսկ մինը ճրագը ճուրաբանով կախ է անում և երգում. Երգից յետոյ բաժին ստանում. ձու, եղ, բրինձ, ալիւր, աղ, չիր և փող:

Խաչեն դաւառի Առաջածոր զիտի շրջակայքում:

Պարով պարով էս տաճարով ալէլուեա.

Էս տաճարով՝ Նուրաշինի, ալ.

Նուրաշինի չորք ընկիւնի, ալ.

Սալը որտէն չարը կամէն, ալ.

Որդին ապրէ բարըկամէն, ալ.

Հրաս իկը մին ձիւաւոր, ալ.

Աջի ձեռքէն աւիտարան. ալ.
 Չախի ձեռքէն կատիկարան. ալ.
 Դռնատակը դքարմբերի. ալ.
 Դռնազուխ սըլկէվըլի. ալ.
 Գերան գերան կեր կերանի.
 Գրըն տիպեր ումըրը վերի. ալ.
 Տըլակոճը մանտըրը վերի. ալ.
 Ծօծը վերի ծալած զումաշ. ալ.
 Հողը վերի սուրը մարդարա. ալ.
 Ծոխը վերի թառ բըրուշում. ալ.
 Թուրունն ա սուրը եղեցէ. ալ.
 Պողերն ա վտովառ ասողեր. ալ.
 Հացերն ա կեօրծած խաչեր. ալ.
 Կուտանան ա թառ ուղօնէկ. ալ.
 Ծըհանն ա ոսկէ շիշակ. ալ.
 Հացթոխն ա փունջ մնեշակ. ալ.
 Տունը շէն տունը շէն.
 Չեր խուխոցը անումը հինչ ա.
 Ըւազին նման չըտանան.
 Գետէն նման ըրնանան.
 Ծառէն նման ծաղկէն.
 Բար երօնին կռանան:

Դիզակ զաւառի չաղըրում գիւղի շըջակայքում.

Ալէյլիա

Աօր ծումա ծում ընդացէք. ալ.
 Աւրխացէք օր ցնձացէք.
 Պարա պարա էս տաճարս. ալ.
 Հաղար պարա էս տաճարս. ալ.
 Աօր ծընունդ մեր Մէյրեմա. ալ.
 Մէրիամ քինաց ձեռնը ծումը. ալ.
 Ծըծխօկ բերաւ իւր խաչ որդին. ալ.
 Հընէրակ քեզ Հուռումսիմա. ալ.
 Քըրիստոճը պըտըտեց էր. ալ.
 Հընէրակ քեզ պէլի Վանէս. ալ.
 Քըրիստոճը խըտըտեցէր. ալ.
 Հընէրակ քեզ գետ Վարդանան. ալ.
 Քըրիստոճը մըկըրտեցէր. ալ.
 Աւղորմի քեզ Հուռումսիմա. ալ.
 Քըրիստոճը ուրուրեցէր. ալ.
 Տընօխնորը չըթըմամից. ալ.
 Մանուկըման խըսուցրէն. ալ.
 Աջի ձեռին աւիտարան. ալ.
 Չախի ձեռին սաղմուսարան. ալ.
 Այիբընը որ կիրեցան. ալ.
 Առաւ կարթից սաղմուսարան. ալ.
 Սաղմուսարան որ կիրեցան.
 Առաւ կարթից աւիտարան.

Աւիտարան որ կիրեցան. ալ.
 Առաւ կարթից շար շարական. ալ.
 Մինաւ կըրար մինաւ ճնջար. ալ.
 Աննը փոխար ծաղէկ ցնծար. ալ.
 Իւրուրցօնէք իւրուրեկէն. ալ.
 Իւրուրեկէն կէշնիշըրէն. ալ.
 Աւհան մունթըրը քըրըհեցէն. ալ.
 Չուրու Մէյրամ ըղըրկեցէն. ալ.
 Մէյրամ եկաւ լալալ լալալ. ալ.
 Լալալ լալալ մըղիւտալալ. ալ.
 Աննը փոխից արխն հողաց. ալ.
 Փունջ մնէշակ հէտէն սողաց. ալ.
 Եկ տէրը տար քու խաչ որդին.
 Էս անում չի մեղ մըրթէթին. ալ.
 Էս վար կանիմ առանց հէթին. ալ.
 Հողիդ կոշիմ արքայութին. ալ.
 Եկ քեզ տանիմ երուսաղէմ. ալ.
 Երուսաղիմ քաղաք շինիմ. ալ.
 Հատ կաղ ու կուր ըպըրցընիմ. ալ.
 Կըվազանը խըրըցնիմ. ալ.
 Կթնախրիւրը փիւրցնիմ. ալ.
 Տնատարը կուշտըցնիմ. ալ.
 Հողընք կիսա կըտըներս. ալ.
 Սառալ ա տըրեխներս. ալ.
 Չիր ու չամիչ իմ ճօտերս. ալ.
 Եղեր մեղրեր իմ մոնթերս. ալ.
 Թուրունն ա հէն ըղեցէ. ալ.
 Ծոխընն ա հում բիւրիշիւմ. ալ.
 Պաճերն ա հէն ասողեր. ալ.
 Պողերն ա հէն լուսնընկեա. ալ.
 Հացերն ա կեօրծած խաչեր. ալ.
 Կուտանան ա թառըղօնէկ. ալ.
 Ծըհանն ա ոսկէ շըշակ. ալ.
 Հացթոխն ա փունջ մնեշակ. ալ.
 Տունը շէն տունը շէն.
 Չեր տըղոցը անումը հինչ ա.
 Ծառ տան ծրանի.
 Ճեղնը տան տերեւ հանի.
 Գետէն նման ըրնանան.
 Ըւաչքէն նման չըտանան.
 Քըրիստօճէն գանձանակը.
 Չեր տըղոցը չարը տանայ.
 Մին ման եզ, մին ման բրինձ.
 Մին վէլա մին քօլա.
 Չեր տըղոցը չարը տանա:

Դիզակում հայերը թուրքերի գիւղերում
 թուրքերը հայերի.

Արէլուջայ.

Խաչաջիւրան կէջա սըղը. արէլուջայ.

Աղամ՝ գիլըն բաջաբղը՝ ար.
 Կեօրըն աղամ աւղամբղը՝ ար.
 Բժօվլարը բաղլըմբղը՝ ար.
 Բժօվլարա նա եարաշըր՝ ար.
 Մախմարգան չիւլար եարաշըր.
 Մախմար չիւլա նա եարաշըր՝ ար.
 Գըղըլ եըհարլար եարաշըր՝ ար.
 Գըղըլ եըհարա նա եարաշըր՝ ար.
 Կախշի իգիթտար եարաշըր՝ ար.
 Իգիթտարա նա եարաշըր՝ ար.
 Կախշի խանուժար եարաշըր՝ ար.
 Խանուժարա նա եարաշըր՝ ար.
 Կախշի ուշախլար եարաշըր՝ ար.
 Գըղըլ քեաքիւլ օղանլար եարաշըր.
 Ուշաղլարտ նա եարաշըր՝ ար.
 Կախշի բէշիկլար եարաշըր՝ ար.
 Բէշիկլարա նա եարաշըր՝ ար.
 Կախշի գարաւաշլար եարաշըր՝ ար.
 Գարաւաշլարա նա եարաշըր՝ ար.
 Կախշի չօրաննար եարաշըր՝ ար.
 Զօրաննարա նա եարաշըր՝ ար.
 Կախշի գօյուննար եարաշըր՝ ար.
 Գօյուննարա նա եարաշըր՝ ար.
 Կախշի գուզուլար եարաշըր՝ ար.
 Աղա օղանլարըն աղը նաղը.
 Այդուլի Զահդուլի Թարղուլի.
 Աթտարըն եկին օլտուն.
 Գլըճըն քեաախին օլտուն.
 Գօստը գօստ օլտուն.
 Գիւշմանի գա փուշ օլտուն.
 Հայիտի հուշիտի.
 Բըղըմբիտա բուշիտի.
 Զօխ վերան խանում օլտուն.
 Աղ վերան գօթուր օլտուն.
 Գոնաղլարը չօթուր օլտուն.
 Այ աղալար այ խանուժար.
 Ալլահ վերգղնան՝ բիր բաթման հաղ,
 Բիր բաթման գիւլիւ,
 Բիր գայիզ ունի,
 Բիր բաթման փիլաւ:

Վարաբաղի ժողովրդական ջրօրհնեաց երգ. բը
 այնքան շատ են և բալմազան որ եթէ իւրաքան-
 չիւր գիւղի վարիանները ժողովն հաւաքեն հա-
 տօրներ կը կազմուի Առայժմ Վարաբաղի իւրա-
 քանչիւր գաւառից մի մի նմուշ:

Գ. Ժ. Ա.

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՍԼՍԸՆԵԸՆ ՏԷՐՈՒԹԵԸՆ.

Թ. Ն Ը Օ Լ Գ Ը Զ Ը Խ.

(Շարունակութիւն) *

Այս բաղմամեայ պատերազմների ընթացքում
 որ յաճախ բանագնացութիւններով ընդհատուում
 էր, Բելիազարը երեւան է գալիս իրրեւ զօրաւոր,
 Մի աչքի ընկնող իրողութիւն էր այս միջոցին ի մի-
 ջի այլոց և Մունդիլի Ասորիք ասպատակելը: Սա էր
 արար աւատական իշխանն Հիրայի, նոյն իսկ այն իշ-
 խանական տնից, որ յիշուեցաւ վերևում: Կաւատին
 նա քիչ առաջ չափազանց զօրաւոր էր երեւցել,
 ուստի մի առ ժամանակ խլել էր նորանից իւր տի-
 րապետած երկիրն և կամ նրա մի մասը և տուել
 էր Հարիթի իշխանին, որ Կինդայի արքայական բազ-
 մաճիւղ ընտանիքիցն էր: Հաղիւ թէ հաւանական
 լինի այն տեղեկութիւնը, որի համաձայն այս իրո-
 դութիւնը իրր թէ կապ է ունեցել Մազդակեաննե-
 րի շփոթութիւնների հետ:

Երբ հռովմէական պատերազմները սկսան, Կա-
 ւատը յետ գարձրեց պատերազմի մէջ փորձուած
 Մունդիլին իր ամբողջ տէրութիւնը: Սա 529 թուի
 գարնանը յարձակուեց Ասորիքի վրայ, աւերեց բո-
 լոր երկիրը մինչև Անտիոք և ահագին բազմութեամբ
 գերիներ բերաւ, որպէս զի գրանց համար փրկանք-
 ներ ստանայ, նա մի վայրենի հեթանոս էր, որ Զ
 ...-ը մի ասորական վանքի 400 կոյսերին մոր-
 թելով զոհ բերաւ իր աւտուածուհի Ուզզային
 (Ասորկան աստեղ), Հէնց նոյն տարում պատերազ-
 մի մէջ ընկաւ նրա ոսոխ Հարիթը:

Կինդայի արքայական տոհմից իր ձեռքն ընկած
 գերիներին Հիրայում սպանել տուաւ նա: Ամբողջ
 կէս դար շարունակ նա հռովմէական հպատակների
 սարսափն էր իր ասպատակներով՝ առանց հարցնելու
 խաղաղութիւն է արդեօք թէ պատերազմ: Վեր-
 ջապէս ընկաւ նա (յուշիս 554) հռովմէական արար
 իշխան Հարիթի դէմ վարած պատերազմում: Այս
 Հարիթը Զաբալայի որդին էր, որի գերի բռնը-
 ուած որդուն նա նոյնպէս Ուզզային զոհ էր բերել:
 Մունդիլն էր նոյնպէս, որ Կաւատին զրդել էր մի
 հարկաւանայ փորձից յետոյ կրկին Ասորիք աս-
 պատակելու համարձակուել (531): Պարսիկները ա-
 ռաջ անցան Եփրատի աջ ափով դէպի հիւսիս, իսկ
 Բելիազարն ստիպեց նրանց յետոյ նահանջելու: Սա-
 կայն Կայիսիկոսի (Ռաքա) մօտ ուրեմն սահմանին
 մերձ մի ճակատ տեղի ունեցաւ, որի մէջ Բելիա-
 զարը բոլորովին ջարդուեց (19. ապրիլի 531): 2ը
 նայելով այս յաղթութեան պարսիկ զօրաւորը